ԼԵՌ ԿԱՄԱՐ

Անցյալ անկատար տեսակի ազգասեր մը

Շատ, շատ ազգասեր էր բազազ Ստեփանը և շատ ալ հարուստ:

Ամեն անգամ, երբ քանի մը արշին ճոթ ծախած հաճախորդը ճամփու դնելով մնացյալ ապրանքը կծալլեր, կնկան ներկայությամբ ինձի կդառնար վճռական թոնով մը.

-Կտեսնա՞ս, Հովնաթա՛ն, աս բոլոր հարստությունս ազգին պիտի նվիրեմ, եթե օր մը անիկա ազատվելու ըլլա իր գերութենեն:

-Օ՜ֆ, ամա՛ն, մա՛րդ. դուն ալ շարունակ մի կրկներ նույն բանը, Աստվածդ սիրես,- վրա կբերեր կինը վախեցած:

-Կնի՛կ, ոչ միայն հնչուն դրամներ, այլ նաև ողջ խանութս, - կառաջանար իր առատաձեռնության մեջ Ստեփանը՝ կրկնապատկելով կնկան սարսափը:

-Նվիրե, թող ընտանիքդ անոթի մեռնի...

-Ծո, խե՛նթ, ընտանիք ապրեցնելու ժամանա՞կ է, երբ հարցը ազգին փրկությանը կվերաբերի, ես կնվիրեմ նաև տունս... ոգևորված կկցեր ան:

-Նվիրե, ինչու կեցե՞ր ես,- սրդոդած կըսեր կինը՝ երեսը շուռ տալով:

Ու կսպասեր կնոջ բարկանալուն... որ նվիրեր:

-Կնի՛կ, քեզի կըսեմ մի բարկացներ ինձի, չենե այգին ալ պիտի նվիրեմ, ջաղացն ալ հետը...

Կինը վախեցած կքրթմնջար միայն սովորաբար, ու կտիրեր լռություն:

Եվ այդ լռության մեջ բազազ Ստեփանին ազգասիրությունը նորանոր ճամփաններ կկտրեր:

-Տո՛ ինձի մտիկ. ես ոչ միայն կուտամ խանութս, տունս, այգիս ու ջաղացս, այլև բոլորը, նույնիսկ աս փալթոս վրայես կհանեմ կուտամ. բարով թող հասնի այդ օրը...

-Ա՛խ, Աստված... գեթ ամառ ըլլար այդ օրը, որ մարդս չպաղեր փալթոսուզ, - կմրմնջար խեղճ կինը ու կհեռանար խանութեն:

Այսպես համարյա շաբաթվան մեջ չորս օր բազազ Ստեփանը իր ունեցած-չունեցածը ազգին նվիրելով՝ մերկ ու տկլոր տուն կվերադառնար խանութեն՝ մեծ սարսափ ազդելով կնկան, որը կվախենար օր մը անոթի մնալ, և ինձ, որ անոր ստակովը համալսարան երթալ մտադրվեր էի: Հետևաբար ես համաձայն չէի ազգին ազատությանը՝ առժամաբար, իսկ բազազ Ստեփանին կնիկը՝ ընդմիշտ:

Բարեբախտաբար թե դժբախտաբար՝ ըսեմ, այդ ատենները հայոց քաղաքական մթնոլորտը կմռայլեր ու կմռայլեր: Ռուսական ցարը հեռուեն մատով հային գլուխը կցուցներ, սուլթանը իր տապարը կիջեցներ հոն ու այսպես հաջողությամբ մեր բնաջնջումը առաջ կտարվեր. իսկ ինչքան ազատության հույսը կաղոտեր, այնքան բազազ Ստեփանին խոստումները կպլպլային...

Անցան շատ տարիներ: Տասներեք տարի ետքը ես դարձյալ բազազ Ստեփանին խանութն էի: Լուրեր կշրջեին, թե հայերը պիտի ազատվին վերջապես օտարին լուծեն, բայց ան որոշեր էր փալթոն չնվիրել ազգին, պատճառ բերելով, թե ոսկրացավ ունի ու, դժբախտաբար, չպիտի կրնա փալթոսուզ կենալ:

Եկան օրեր, երբ լուրերը սկսեցին առավել ևս համառ դառնալ ու մամուլն ալ արձագանքեց. ես դարձյալ իր քովն էի. ան որոշեր էր այգին պահել որպես իր

ընտանիքին ապրուստ, իսկ ջաղացը տալ իբր օժիտ իր Արմինե դստեր, որը տգեղ ըլլալուն համար չպիտի տանեին:

Երրորդ այցիս, երբ լուրերը ստուգվեցան, որ հայկական գունդերը Հայաստան կփութային, անիկա համաձայն էր իր տան քանի մը սենյակները ազգին նվիրել, եթե վարձվորները համաձայնեին դուրս ելլել. իսկ խանութը, որ անապահովության երեսեն դատարկված էր, այնքան պարապ էր, որ կամչնար իրավցնե ազգին նվիրել:

Ու վերջ ի վերջո, բազազ Ստեփանը բան մը չտվավ ազգին: Բայց ազգասեր մարդ էր:

Մեղավորը ազգն էր, որ այսպես անժամանակ ազատվեցավ: Ամեն բան իր ժամանակն ունի...

Մինչև իր կյանքի վերջ, ես իբրև մոտիկ բազազ Ստեփանին, պիտի վկայեմ, որ մնալու է ազգասեր՝ միայն անցյալ անկատար տեսակի:

Ըսեմ, որ բազազը ինձի համալսարան չղրկեց. մերժում ստացա: Հոգ չէ, չեմ ցավեր, միայն ափսոս, եթե առաջուց գիտնայի, թե մերժվելու էի, պիտի ցանկանայի, որ Հայաստանի ինքնավարությունը տրվեր ասկե տասներեք տարի առաջ...

1918թ.